

Երևանի Գ. Չաուշի անվան

հ.188 հիմնական դպրոց

## **Հետազոտական աշխատանք**

Թեմա՝ ՏՀՏ գործիքների կիրառումը որպես դասի արդյունավետությունը բարձրացնող միջոց

Ուսուցիչ՝ Ջ. Անտոնյան

Ղեկավար՝ Մ. Պետրոսյան

Երևան 2022

## Բովանդակություն

Ներածություն .....	2
1. Ուսուցման գործընթացում համակարգչային տեխնոլոգիաների կիրառման առավելությունները .....	4
2. Տեղեկատվական տեխնոլոգիաների դիդակտիկական գործառույթները անգլերենի դասերին .....	6
Եզրակացություն.....	16
Օգտագործված գրականության ցանկ .....	18

## Ներածություն

Վերջին 2 տասնամյակներում գլոբալ կրթական համակարգը բախվել է մի խոշոր խնդրի հետ, որը պայմանավորված է տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման հետ կապված՝ կրթական ավանդական համակարգի ճգնաժամի հետ: Տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ օգտագործողներ հանդիսացող դպրոցականները ուսուցման սոսկ ավանդական ձևերի կիրառմամբ չեն բավարարվում: Նախկին մեթոդները այլևս արդյունավետ չեն, քանի որ ժամանակակից դպրոցի աշակերտին հետաքրքրելու և նրան դեպի ուսումը շահագրգռելու, ստեղծագործական մտածողության զարգացման համար պետք է կիրառել նորագույն մանկավարժական և տեխնոլոգիական միջոցներն ու նրանց ընձեռած հնարավորությունները՝ չանտեսելով սակայն ավանդական մեթոդների հնարավորությունները: Աշակերտի ստեղծագործական կարողությունների զարգացման և նրա մոտ դասի նկատմամբ հետաքրքրությունը պահելու համար պարտադիր է դարձել զանազան մուլտիմեդիական միջոցների, ինտերակտիվ քարտեզների, տեսասահիկների կիրառումը դասի ժամանակ, աշակերտների ակտիվ ուսուցման կիրառումը, աշակերտին սոսկ ուղղություն տալով՝ նրան ինքնուրույն որոնողական աշխատանքի մղելն ու դասից դուրս աշակերտի ինքնուրույն աշխատանքի խթանումը, քանի որ ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլ ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում:

Հետազոտության հիմնական վարկածի համաձայն նորագույն մանկավարժական տեխնոլոգիաների՝ ակտիվ ուսուցման մեթոդների և համակարգչային տեխնոլոգիաների հնարավորությունների համադրված կիրառման արդյունքում խթանվում է աշակերտի ստեղծագործական միտքը:

Դպրոցում ակտիվ ուսուցման, ավանդական ուսուցման և նորագույն տեխնոլոգիաների համատեղ կիրառման համար պահանջվում են նոր մանկավարժական

տեխնոլոգիաներ, որոնք նպաստում են ժամանակակից դպրոցի առջև դրված ուսուցման խնդիրների լուծմանը, քանի որ մանկավարժական տեխնոլոգիան իրենից ներկայացնում է նախագծված ուսումնադաստիարակչական գործընթացը պրակտիկայում հաջորդաբար և պարբերաբար իրագործման մասին պատկերացում:

Տվյալ թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ ներկայումս գերակա ազգային «Կրթություն» նախագծի իրագործման շրջանակներում ուսուցման գործընթացում ակտիվ կերպով ներդրվում են տեղեկատվական տեխնոլոգիաները: Ուսուցման ժամանակակից տեխնիկական միջոցների օգտագործումը նպաստում է ուսումնադաստիարակչական գործընթացի արդիականացմանը, աշակերտների մտավոր գործունեության ակտիվացմանը, մանկավարժների ստեղծագործականության զարգացմանը: Այդ միջոցները թույլ են տալիս անցկացնել հեռավար ուսուցում, զարգացնում են անընդհատ ուսուցման համակարգը՝ դրանով իսկ մեծացնելով ուսումնական գործընթացի արդյունավետությունը: Հայրենական և արտասահմանյան հրատարակություններում ուսումնական գործընթացի համակարգչայնացումը համարվում է այս կամ այն առարկայի ուսուցման կազմակերպման արդիական գործոններից:

# 1. Ուսուցման գործընթացում համակարգչային տեխնոլոգիաների կիրառման առավելությունները

Ներկայումս զգալիորեն մեծացել է տեղեկատվական տեխնոլոգիաների դերը մարդկանց կյանքում: Ժամանակակից հասարակությունը ներգրավվել է տեղեկատվայնացում կոչվող համապետական գործընթացին, որը նպաստում է ոչ միայն գիտատեխնիկական առաջընթացի արագացմանը, մարդկային գործունեության բոլոր տեսակների ինտելեկտուալացմանը, այլ նաև սոցիումի որակապես նոր տեղեկատվական միջավայրի ստեղծմանը, որն ապահովում է մարդու ստեղծագործական ներուժի զարգացումը<sup>1</sup>: Ընդ որում ժամանակակից հասարակության տեղեկատվայնացման գործընթացի գերակա ուղղություններից մեկն է հանդիսանում կրթության տեղեկատվայնացումը, որի նպատակը կայանում է նոր տեղեկատվական տեխնոլոգիաների՝ համակարգչային և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման հաշվին մտավոր գործունեության գլոբալ ակտիվացման մեջ:

Ուսուցման համար տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնական արժեքավորությունը կայանում է նրանում, որ նրանք թույլ են տալիս ստեղծել ուսուցման անհամաչափ ավելի վառ ինտերակտիվ միջավայր: Ի տարբերություն ուսուցման սովորական տեխնիկական միջոցների՝ տեղեկատվական տեխնոլոգիաները աշակերտներին ոչ միայն թույլ են տալիս ձեռք բերել լայնածավալ գիտելիքներ, այլ նաև զարգացնել իրենց մտավոր, ստեղծագործական ունակությունները, ինքնուրույն նոր գիտելիքներ ձեռք բերելու, տեղեկատվության տարբեր աղբյուրների հետ աշխատելու ունակությունները<sup>2</sup>:

Ուսուցման գործընթացի զարգացման արդի փուլում առաջնային են համարվում ուսուցման որակի և ուսումնական մոտիվացիայի կտրուկ բարձրացման, նկատվող կործանարար երևույթների վերացման խնդիրները: Իմ կարծիքով, այս և մի շարք այլ

<sup>1</sup> Максимовская М. А. Информационное управление школой // Информатика и образования — 2003. — № 11, էջ 12-29:

<sup>2</sup> Полат Е. С., Бухаркина М. Ю., Моисеева М. В., Петров А. Е. Новые педагогические и информационные технологии в системе образования: Учеб. пособие. — М., Академия, 2000, էջ 41:

խնդիրներ կարելի է լուծել ավանդական միջոցները գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների հետ համադրելու միջոցով: Ընդ որում ուսուցման գործընթացի արդյունավետության ապահովման հարցում կարևոր դեր է խաղում նրա ակտիվացումը՝ հիմնված նոր մանկավարժական տեխնոլոգիաների, այդ թվում նաև՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման վրա:

Որպես աշակերտների գործունեության գործիք հանդես եկող համակարգչի գործառույթները հիմնված են փաստերի ճշգրիտ գրանցման, մեծածավալ տեղեկատվության պահպանման և հաղորդման, տվյալների խմբավորման և վիճակագրական մշակման նրա հնարավորությունների վրա: Համակարգչի կիրառումը թույլ է տալիս օպտիմալացնել ուսուցման գործընթացը՝ մանկավարժի ժամանակի զգալի տնտեսման հետ մեկտեղ մեծացնելով ուսուցման գործընթացի արդյունավետությունն ու օբյեկտիվությունը: Ուսումնական նյութերի ավտոմատ վերլուծությունը, ընտրումը և արդյունավետության կանխատեսումը հանդիսանում են որպես աշակերտների գործունեության տեղեկատվական աջակցման գործիք կիրառվող համակարգչի օգտագործման կարևոր ուղղություններից<sup>3</sup>: Աշակերտների համար համակարգիչը կարող է կատարել բազմաթիվ գործառույթներ՝ հանդես գալով մանկավարժի, փորձագետի, գործընկերոջ և գործունեության գործիքի դերերում: Աշակերտները իրենց աշխատանքի տարբեր փուլերում համակարգիչը կարող են օգտագործել իրենց անհատական կարիքներին համապատասխան և տարբեր կերպ՝ կախված իրենց առաջադրված խնդիրներից:

Պետք է նկատի ունենալ, որ ուսուցման գործընթացում համակարգչի օգտագործման դրական արդյունքների հասնելու համար ուսուցման գործընթացում համակարգչի պարզապես ներդնելը բավական չէ, նպատակահարմար է մշակել ուսուցման ամբողջ գործընթացի ընթացքում համակարգչային տեխնոլոգիաների օգտագործումը նախատեսող համապատասխան առարկայական ծրագրեր:

Նշեմ նաև, որ մասնագետների մեծամասնությունը այն կարծիքին է, որ համակարգիչը, իրականացնելով մի շարք ուսուցողական գործառույթներ, չի կարող լիովին փոխարինել մանկավարժին՝ օրինակ, համակարգիչը չի կարող կատարել

---

<sup>3</sup> Машбис Е. И. Психолого–педагогические проблемы компьютеризации обучения. — М., Просвещение, 2006, էջ 56-59:

մանկավարժի դաստիարակչական գործառույթները, փոխարինել մարդկային շփմանը, հասկանալ մարդկային մտքի գաղտնիքը: Այդ իսկ պատճառով ժամանակակից փուլում առավել կառուցողական է համարվում այն մոտեցումը, համաձայն որի համակարգիչը ոչ թե պետք է հակադրել մանկավարժին, այլ դիտարկել որպես մանկավարժների մասնագիտական գործունեությանը աջակցող միջոց:

## **2. Տեղեկատվական տեխնոլոգիաների դիդակտիկական գործառույթները անգլերենի դասերին**

Ընդունված է, որ օտար լեզուների ուսումնառության հիմնական բաղկացուցիչ հանդիսանում է ոչ միայն գիտելիքը, այն նաև կարողությունները և հմտությունները: Այդ իսկ պատճառով առաջին պլան է մղվում դրանց ամրապնդման խնդիրը: Սովորողը պետք է համոզված լինի նրանում, որ խոսքային գործողությունները, որոնք նա կատարում է լեզվի տիրապետման պրոցեսի ընթացքում, ճիշտ է: Բայց իրականացնել ամրապնդում առանց ուսուցչի ակտիվ գործողությունների, որոնք կապված են սովորողների գործողությունների դիտարկման կամ ուսուցման արդյունքների ծանոթացման հետ անհնարին է:

Հսկումը տարբերակվում է դաստիարակման մյուս տիպերից նրանով, որ այն իրենից ներկայացնում է համեմատական դաստիարակում, որի ընթացքում սովորողի գործողությունները համեմատվում են որոշակի էտալոնի հետ: Այն, ինչը ընդունվում է հսկման նպատակով, անվանվում է հսկման օբյեկտ: Դրանք կարող են լինել արտաբերման որոշ կանոններ, ուղղագրական, ընթերցման կանոններ կամ բառապաշարի յուրացում և այլն<sup>4</sup>:

Օտար լեզվի ուսուցանման հիմնական խնդիրը կայանում է սեփական մտքերը ուսումնասիրվող լեզվով արտահայտման ունակությունը և այլ մարդկանց այդ լեզվով

---

<sup>4</sup> Байкова Л.А., Гребенкина Л.К. Педагогическое мастерство и педагогические технологии.- М., 2011, էջ 52:

խոսքի հասկանալը: Այդ իսկ պատճառով հսկման ենթակա են լեզվաբանական հաղորդակցության բոլոր ասպեկտները. ունկնդրում, խոսք, ընթերցում և գրավոր:

ՏՀ տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ինչպես սովորողներին, այնպես էլ ուսուցիչներին, դպրոցի ղեկավարությանը և աշխատակիցներին գտնել տեղեկատվության բազմազան և բազմաթիվ աղբյուրներ և արդյունավետ օգտվել դրանցից: Մասնավորապես.

- հարցերն ու խնդիրները լուծելու տարբեր միջոցներ գտնել,
- գնահատել դրանք,
- կապեր հաստատել,
- փորձարկել և գտնել խնդիրների լուծման օպտիմալ տարբերակներ,
- հաղորդակցության և երկխոսության մեջ մտնել իրական և վիրտուալ աշխարհում:

*Ի՞նչ է պետք վերը նշվածին հասնելու համար.*

1. Սովորողները պետք է ներգրավվեն ակտիվ ուսումնառության մեջ՝ ունենալով համապատասխան շարժառիթներ:
2. Ուսումնառությունը պետք է լինի իրական և համագործակցային:
3. Կրթակարգը, ուսումնական ծրագրերը և պլանները (curriculum) պետք է ինտեգրվեն ուսուցման և ուսումնառության գործընթացին:
4. Սովորողները պետք է համակարգչային գրագիտություն ունենան:
5. Սովորողները պետք է հանդես գան որպես հետազոտողներ և գիտելիք «հայթայթողներ»:
6. Գնահատումը (բովանդակության, կարողությունների ու հմտությունների, արդյունքի) պետք է հիմնվի գործունեության վրա, այդ գործունեությամբ ձեռք բերվածի վրա (performance based):

Համակարգիչը դպրոցում ուսումնառության լիարժեք գործիք դարձնելու համար անհրաժեշտ է պահպանել մի շարք պայմաններ, այդ թվում՝

- **Ժամանակային.** դպրոցական ծրագրի յուրաքանչյուր առարկա ունի իր կազմակերպչական և բովանդակային առանձնահատկությունները, որոնց



համապատասխան էլ անհրաժեշտ է որոշել, թե երբ և ինչպես պետք է ընտրել և սկսել տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը:

• **Տեխնիկական.** անհատական համակարգիչների տեխնիկական առանձնահատկությունները տարբեր են: Կախված այն բանից, թե ինչ խնդիրներ ենք ուզում լուծել, անհրաժեշտ է ընտրել համապատասխան համակարգիչ և օժանդակ սարքեր (սկաներ, տպիչ, ականջակալեր, խոսափող և այլն): Խնդիրների շրջանակը սահմանափակվում է տվյալ առարկային:

• **Կազմակերպչական.** տվյալ առարկայի դասերին համակարգչային տեխնոլոգիաների ներդրման պարագայում ծագում է ծրագրային ապահովման և սարքավորումների սպասարմկան խնդիրը: Պարզ է, որ բոլոր ուսուցիչները չեն կարող այդքան հմուտ լինել, ուստի ծագում է համակարգչային, ծրագրային մասնագետ-օգնականի խնդիրը (ասենք՝ համակարգչային կենտրոնի կամ կաբինետի աշխատակցի)<sup>5</sup>:

Թվանշանային տեխնոլոգիաները, հատկապես ծրագրային ապահովումը բացառիկ հնարավորություն են ընձեռում իրենց մեջ միաժամանակ միավորելու հետևյալ կարևորագույն հատկանիշները.

- փոխներգործություն,
- մուլտիմեդիական բնույթ (ուսուցման բազմազան միջոցների կիրառում),
- ճկուն հարմարվողականություն:

Չենց այս հատկանիշների շնորհիվ են ի հայտ գալիս համակարգչային և հեռահաղորդակցական միջոցների դիդակտիկական լայն հնարավորություններն ու դրանց ինտեգրումը ուսումնական գործընթացում:

Այսպիսով, ուսուցման միջոցների, այդ թվում նաև համակարգչային տեխնիկայի դիդակտիկ գործառույթ ասելով հասկանում ենք ուսումնադաստիարակչական գործընթացում որոշակի նպատակներով ուսուցման միջոցների կիրառման հնարավոր դրսևորումները:

Իսկ ինչպիսի՞ն են ժամանակակից թվային տեխնոլոգիաների որոշակի դիդակտիկական գործառույթները: Թվարկենք գլխավորները.

---

<sup>5</sup> Балаев А.А., Активные методы обучения. Москва, 2016, էջ 52:

1. «Մուլտիմեդիացնել» ուսումնական գործընթացը, այսինքն հագեցնել ուսուցման բազմազան միջոցներով, համապատասխանեցնել ժամանակակից թվային տեխնոլոգիաների հնարավորություններին, ինչը, ցավոք, ավելի հաճախ հանդիպում են գովազդներում, քան ուսուցման գործընթացում:

2. Համակարգել նույն տարածաշրջանի, անգամ տարբեր երկրների տարբեր դպրոցների, ուսումնական ու գիտական կենտրոնների սովորողների, ուսուցիչների, ուսանողների, գիտական աշխատողների տարաբնույթ համատեղ հետազոտական գործունեությունը: Հատուկ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համագործակցայինը շատ ավելի արդյունավետ է, քան ավանդական եղանակը, քանի որ խիստ բարձրացնում է սովորողների ակտիվությունը, ինքնուրույնությունը, դրական տրամադրվածությունն ու շահագրգռվածությունը, զարգացնում է ստեղծագործական կարողությունները:

3. Կազմակերպել հեռուսուցման մատչելի ցանց:

4. Կիրառել թվանշանային տեխնոլոգիաներ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում:

5. Ձևավորել սովորողների մեջ հաղորդակցական կարողություններ, մի կողմից՝ հաղորդակցման / շփման, փոխգործունեության (ինտերակցիայի) անհրաժեշտ կուլտուրա, մյուս կողմից՝ մտքերը հստակ, տրամաբանորեն ու հակիրճ ձևակերպելու կարողություն, հանդուրժողականություն ուրիշի կարծիքի, ուրիշի մշակույթի ու սովորույթների նկատմամբ, բանավեճ վարելու և սեփական տեսակետը փաստարկված, հիմնավորված ներկայացնելու, գործընկերոջ կարծիքը լսելու, հարգելու կարողություն:

6. Կազմակերպել իրական հետազոտական ու գիտական գործունեություն:

7. Ձևավորել տարբեր աղբյուրներից տեղեկատվություն հայթայթելու, ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաներով այն մշակելու, դասակարգելու, պահպանելու և աշխարհի ցանկացած անկյուն փոխանցելու կարողություններ:

8. Ստեղծել լեզվաբանական բնական հաղորդակցական մթնոլորտ համատեղ հեռահաղորդակցական միջազգային կոնֆերանսների, նախագծերի անցկացման միջոցով, ինչը նպաստում է օտար լեզուներով հաղորդակցելու անհրաժեշտության գիտակցմանը, հետևաբար նաև օտար լեզուներին տիրապետելու ձգտմանը:

9. Ձևավորել միջմշակույթային կապեր, ինչը նպաստում է սովորողների հումանիտար զարգացմանը:

10. Ապահովել լեզվական (վերբայ) մտածողությունից անցումը տեսողական (վիզուալ) և լեզվական մտածողությունների միասնացմանը (ինտեգրմանը):

11. Իրականացնել հետադարձ կապի բազմազան հնարավորությունները:

Տեղեկատվական տեսանկյունից դասի արդյունավետությունը կամ ուսուցումը կարելի է դիտարկել որպես ոչ միան գիտելիքների հաղորդման պրոցես (դրանց որոշակի աստիճանով մեկնաբանությամբ), այլ նաև գիտելիքի հետ համատեղ սովորողների շփման կազմակերպում: Ժամանակակից պայմաններում նման շփումը ունի հետևյալ առանձնահատուկ գծերը.

1. Դպրոցում տեղեկատվությունը ներկայացված է հիմնականում պատրաստի գիտելիքի ձևով, որը անհրաժեշտ է փոխանցել սովորողներին:

2. Տեղեկատվությունը, որը չի հանդիսանում պատրաստի գիտելիք, կարող է վերափոխվել գիտելիքի: Ուսուցումը նման դեպքերում իրականացվում է լեզվաբանական տեղեկատվությունից դուրս (ցանկություն, պատճառ, էմոցիա, հուզական փորձ և այլն) մշակույթային նշանա-սիմվոլային ձևի փոխանցման միջոցով:

3. Հատկապես նշանա-սիմվոլային ձևերով (լեզուերում) տեղեկատվության ֆիքսումը հնարավորություն է տալիս դրան դառնալ գիտելիք և տալիս է հնարավորության փոխանցել այն մի մարդուց մյուսին:

4. Դպրոցում գիտելիքը ադապտացվում է ըստ սովորողների մակարդակի ուսումնառության որաշակի պահանջներին համապատասխան:

Օտար լեզուների ուսուցման համար համակարգիչների օգտագործման մեթոդիկան անվանվում է համակարգչային լեզվադիդակտիկական մեթոդ, որը կարող է իրականացվել որոշ համակարգչային մեթոդների ուսուցման ձևով: Գոյություն չունեն դրանց դասակարագման համընդհանուր մոտեցումներ: Կախված սեփական ուսուցման պրոցեսի կառավարման մեջ և վերջնական նպատակից սովորողի թույլատրելի ակտիվության մակարդակից տարբերակում են ավտոմատացված ուսուցման հետևյալ մեթոդները.

- սովորողի ուսման գործունեության ծրագրավորում,
- ուսումնառության միջավայրի մոդելավորում,
- ազատ ուսուցում<sup>6</sup>:

Ուսումնառության գործունեության ծրագրավորումը կայանում է նրանում, որ սովորողի վրա ղեկավարող ազդեցությունը որոշվում է դասավանդվող ծրագրով, առաջադրված ուսուցման կամ հսկման առաջադրանքների հաջորդականությամբ: Ծրագրի ստեղծման ժամանակ կիրառվում են ղեկավարման տարբեր գործոններ. սովորողի պատասխանի ճշտություն, պատասխանի ժամանակ, հուշման տեսակ, պատասխանում փորձերի քանակություն, առաջադրանքի բարդություն և այլն:

Ծրագրա-ղեկավարման ուսուցման ժամանակ համակարգիչը սովորողի հետ միաժամանակ իրականացնում է որոշակի ծրագիր, որտեղ ներկայացված են յուրացմանը ենթակա գիտելիքները, կարողությունները և ունակությունները, ինչպես նաև դրանց տիրապետման կանոնները: Ըստ սովորող կադրերի միավորման եղանակի նման ծրագրերը կարող են լինել գծային, ճյուղավորված և խառը:

Գիտելիքների ավտոմատացված ստուգումը գրեթե ամբողջովին հանգեցնում է սովորողների կողմից որոշակի առաջադրանքների համախմբի հսկմանը, որոնք ներկայացվում են համակարգչի կողմից: Նման առաջադրանքների համախումբը անվանվում է հսկիչ ծրագիր: Դրա հիմքում ընկած են դասավանդվող ծրագիրը, որում բացակայում են տեղեկատվական կադրերը:

Ուսումնառության միջավայրի մոդելավորումը հանգեցվում է ուսուցման ծրագրերի ստեղծմանը, որոնք համակարգչում մոդելավորում են որոշակի օբյեկտի կառույց կամ դրա գործունեության սկզբունք: Սովորողի վրա ղեկավարող ազդեցությունը նաև որոշվում է ուսուցման ծրագրով: Սովորողի և համակարգչի շփման բոլոր հնարավոր իրավիճակները նախատեսվում են նախորոք: Սովորողը ունի հնարավորություն ընտրել ուսուցման առաջադրանքները միայն որոշակի հնարավոր բազմազանությունից:

Համակարգչային ուսուցման մոդելները բաժանվում են օբյեկտիվ (առարկայական) և մտավոր տիպի մոդելների: Օբյեկտիվ տիպի մոդելները նախատեսված են

<sup>6</sup> Бершадский М.Е., Гузеев В.В. Дидактические и психологические основания образовательной технологии. -М.: Центр “Педагогический поиск”, 2013, էջ 88:

հիմնականում որոշակի օբյեկտի ընկալման կամ դրա հետ աշխատանքի կարողությունների ձեռք բերման համար, օրինակ, օգտագործողի համար համակարգչի ստեղնաշարի հետ աշխատանքի ուսուցում:

Ազատ ուսուցումը բնութագրվում է նրանով, որ սովորողը ինքն է ընտրում թեման և համակարգչի հետ աշխատանքի եղանակը: Աշխատանքի նպատակը հանգեցվում է ոչ միայն համապատասխան կադրերի ստեղծմանը, այլ նաև մաքսիմալ արդյունավետության ստացման համար դասավանդողի գործողությունների ճշգրտմանը, դասավանդման նյութի հետ աշխատանքի օպտիմալ մեթոդի հուշմանը: Տարբերակում են ուսուցման երեք տիպեր.

- կառուցվածքա-դեկավարման,
- որոշումների ընդունման ուսուցում,
- բազմացման<sup>7</sup>:

Կառուցվածքա-դեկավարման ուսուցման ժամանակ ուսուցման նյութը ներկայացվում է տվյալների որոշակի հերարխիայի ձևով: Յուրաքանչյուր կառուցվածքային մակարդակի համար համակարգչում որոշված է ուսուցման սահմանային նպատակը և դրա ձեռք բերման պայմանները:

Որոշումների ընդունման ուսուցումը բնութագրվում է նրանով, որ համակարգիչ ներմուտքված ուսուցման տեղեկատվությունը իրենից ներկայացնում է որոշակի ձևով կողմնորոշված իրավիճակների խումբ: Առաջադրանքը կայանում է նրանում, որ հիմնվելով որոշակի համակարգչային ելակետային իրավիճակի վրա և կողմնորոշվելով սովորողի հարցադրումներին համակարգչի պատասխաններով, հանգել որոշակի վերջնական արդյունքի:

Բազմացման ուսուցումը համարվում է ազատ ուսուցման առավել հեռանկարային տարատեսակ: Դրա էությունը կախված է սովորողի մոդելից, որը ներակայցնում է նրա ընթացիկ գիտելիքների մակարդակը, և ուսուցման նյութի մոդելից, այսինքն դրանց կապերի և հասկացությունների համախմբից, որը նա պետք է յուրացնի: Ուսուցանվող կադրերը չեն ֆիքսվում նախապես, այլ ստեղծվում են ծրագրի կողմից կախված ելակետային նյութի յուրացման բնույթից:

---

<sup>7</sup> Колеченко А.К. Энциклопедия педагогических технологий.-СПб, 2011, էջ 41-44:

Այսօր օտար լեզուների իմացությունը հնարավորություն է տալիս սովորողին ծանոթանալ համաշխարհային գիտական, հասարակական, տնտեսական, մշակութային տեղեկատվությանը, ընձեռում է տեղեկատվության գոյություն ունեցող անսպառ աղբյուրներից օգտվելու լայն հնարավորություններ, նպաստում է նրանց գիտելիքների և մտահորիզոնի ընդլայնմանը, իսկ տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները ապահովում են նյութի որոնումը, հավաքումը, ուսումնասիրումը: Հետևաբար օտար լեզվի դասաժամերին ՏՀՏ-ների կիրառումը ներկայումս դարձել է անհրաժեշտություն: Տեխնոլոգիաները ուսուցման գործընթացում հանդես են գալիս նաև որպես դասի կազմակերպման, կառուցման գործիք՝ որակապես փոխելով և ուսուցչի դերը և դասի արդյունավետությունը<sup>8</sup>:

Այսպես, ուսումնական ծրագրով նախատեսված «Երկիրը, որի լեզուն սովորում եմ» թեման ավելի պատկերավոր և հետաքրքիր է դառնում, երբ զուգորդվում է Power Point ծրագրով պատրաստված տեսասահիկներով: 8-րդ դասարանում այս թեմայի ուսումնասիրությունը կարելի է սկսել շնորհանդեսով (presentation), որի ընթացքում սովորողը հնարավորություն կունենա տեսնել տվյալ երկրի աշխարհագրական դիրքը, տեսարժան վայրերը, բուսական և կենդանական աշխարհին բնորոշ տեսակները, բնաշխարհը, ազգային խորհրդանիշները, տարազը, ազգային հերոսների դիմանկարները, լսել ազգային հիմնը: Նման ձևով հաղորդված ինֆորմացիան ավելի լավ է տպավորվում սովորողի հիշողության մեջ, բացի դա մեծացնում է հետաքրքրությունը և խթան հանդիսանում, որ սովորողը ընդգրկվի ուսումնական գործընթացում: Ուսուցչի հաջորդ քայլը հաղորդված ինֆորմացիայի ամրապնդումն է: Ուսուցիչը կարող է ցուցադրումից հետո մտազրոհի միջոցով պարզել, թե ինչ յուրացրեցին սովորողները, այնուհետև գրատախտակին քարտեզագրել հաղորդված ինֆորմացիան՝ ցույց տալով գաղափարների միջև առկա կապերը: Վերջում սովորողներին կարելի է հանձնարարել ընթերցել բաշխված նյութը և գրատախտակին արված քարտեզի վրա ավելացնել նոր տեղեկատվություն:

7-րդ և 8-րդ դասարաններում սովորողներն արդեն ծանոթ են Power Point ծրագրին և կարող են ինքնուրույն աշխատել: Ուստի ուսուցիչը կարող է դասարաններում կազմել խմբեր՝ հանձնարարելով նրանց ստեղծել շնորհանդեսներ

---

<sup>8</sup> Селевко Г.К. Современные образовательные технологии.-М., 2008, էջ 96:

տարբեր թեմաներով: Անհրաժեշտ է, որ ուսուցիչը նախօրոք սովորողներին ներկայացնի այն չափանիշները, որոնցով գնահատվելու է նրանց շնորհանդեսը: Դրանք են՝

- Գեղագիտական տեսանկյունից գեղեցիկ ձևավորված Slide-ներ / գույների ճիշտ համադրություն, ետին պլանի ճիշտ ընտրություն, պատկերների գրագետ տեղադրում/,

- Անիմացիաների, տեքստի և պատկերի գրագետ կիրառում,

- Հնարավորինս հարուստ և ճիշտ բառապաշարի, քերականական միջոցների և շարահյուսության կիրառում,

- Ճիշտ արտասանություն և հնչերանգ:

Անհրաժեշտ է նաև, որ ուսուցիչը լրացուցիչ աշխատանք տանի խմբերի հետ՝ օգնելով նրանց պլանավորել իրենց աշխատանքը, հայթայթել անհրաժեշտ տեղեկատվությունը, յուրացնել թեմային առնչվող բառապաշարը, կազմել գրագետ տեքստ՝ կիրառելով քերականական և լեզվական ճիշտ արտահայտչամիջոցներ:

Նախապատրաստական աշխատանքները ավարտելուց հետո ուսուցիչը կարող է հրավիրել ինֆորմատիկայի, նկարչության և օտար լեզվի մյուս ուսուցիչներին, ինչպես նաև զուգահեռ դասարանների աշակերտներին և նրանց ներկայությամբ խմբերը գործելով որպես տուրիստական գործակալություններ, կներկայացնեն իրենց աշխատանքը, որից հետո ներկաները կհայտնեն իրենց կարծիքները և թե՛ , որ գործակալությունից կցանկանային տոմս գնել<sup>9</sup>:

Աշխատանքը ժամանակատար է և աշխատատար, սակայն օգնում է սովորողներին զարգացնելու իրենց խոսելու և գրելու կարողությունները, օգնում է սովորողներին կիրառել այլ առարկաների դասաժամերից ձեռք բերած գիտելիքները, ինչպես նաև աշխատել թիմում:

SZS-ների և ինտերնետի կիրառումը օտար լեզվի դասաժամին կարող է նպաստել ոչ միայն խոսքային չորս կարողությունների զարգացմանը, այլ նաև նպաստում է շատ հաճախ աշխատանքային ոլորտում անհրաժեշտ հմտությունների ձևավորմանը:

---

<sup>9</sup> Педагогика. Большая современная энциклопедия. Состав. Рапацевич Е.С.-Мн., 2005, էջ 52-56:

Ուսումնական ծրագրով 4-րդ, 5-րդ, 6-րդ դասարաններում նախատեսված է հեքիաթներ, ադապտացված պատմություններ, որոնց ուսումնասիրությունը կարելի է զուգակցել մուլտֆիլմի դիտումով: Օրինակ, «The Princess and The Frog», «The Three Bears», «The Piper» /Գ. Գասպարյան, Ն. Հովհաննիսյան, Հ. Քաջբերունի. 5, 6-րդ դասարաններ/ հեքիաթներին անդրադառնալիս, ուսուցիչը կարող է նախ քննարկել տեքստում առկա անձանոթ բառերն ու արտահայտությունները, հետո ընթերցել հեքիաթը, հարցերով պարզել արդյոք սովորողները ընկալել են տեքստը, հետո, երբ սովորողները տանը աշխատած կլինեն տեքստի վրա, կազմակերպել մուլտֆիլմի դիտում: Առաջին և երկրորդ դիտման ժամանակ հանձնարարել սովորողներին դասագրքում փոքրիկ նշաններով առանձնացնել այն նախադասությունները, որոնք լսեցին: Ուսուցիչը կարող է օգնել աշակերտներին՝ բարձրացնելով հնչող ձայնը կամ որևէ նշան անելով: Երրորդ դիտման ժամանակ կարելի է ժամանակ առ ժամանակ իջեցնել հնչող ձայնը և թույլ տալ սովորողներին ընթերցել անձամբ: Կարելի է անգամ կազմակերպել մուլտֆիլմի հայերեն «կրկնօրինակում»: Ուսուցիչը կարող է նաև ինքը գտնել տվյալ տարիքային խմբին հարմար որևէ մուլտֆիլմ, առանձին աշխատել տեքստային տարբերակի վրա, այնուհետև կազմակերպել դիտումը: Այսպիսի աշխատանք հաճախակի կատարելու դեպքում անգամ կարելի է սովորողներին հանձնարարել դիտման ընթացքում ընթերցել հերոսների դերերը: Սա բավականին դժվար առաջադրանք է, քանի որ սովորողից պահանջվում է և հետևել մուլտֆիլմին, և տեքստին, ինչպես նաև ընթերցել դերը՝ պահպանելով ընթերցանության կանոնները:

Անզլերենի համակարգչային ինքնուսույցները, լեզվաուսուցման վիրտուալ ռեսուրսները, բառարանները, ուսուցողական և կրթամշակութային կայքերը հնարավորություն են ընձեռում սովորողին սովորել նաև ինքնուրույն: Այսպես երբ անհրաժեշտ է կրկնել անցած նյութը, օրինակ «the» հոդի կիրառումը, կամ ժամանակաձևերը կարելի է դասարանը բաժանել խմբերի և հանձնարարել, համացանցից օգտվելով, գտնել վարժություններ թեմայի հետ կապված: Որից հետո խմբերը կատարում են իրենց գտած վարժությունները և հենց նույն կայքում տրված պատասխաններով ստուգում կատարած առաջադրանքը և ներկայացնում են իրենց աշխատանքը՝ տալով մեկնաբանություններ ըստ անհրաժեշտության:



## Եզրակացություն

Այսպիսով, վերլուծելով վերոնշյալ թեման, եկանք այն եզրահանգման, անգլերենի իմացությունը հնարավորություն է տալիս սովորողին ծանոթանալ համաշխարհային գիտական, հասարակական, տնտեսական, մշակութային տեղեկատվությանը, ընձեռում է տեղեկատվության գոյություն ունեցող անսպառ աղբյուրներից օգտվելու լայն հնարավորություններ, նպաստում է նրանց գիտելիքների և մտահորիզոնի ընդլայնմանը, իսկ տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները ապահովում են նյութի որոնումը հավաքումը, ուսումնասիրումը, հետևաբար օտար լեզվի դասաժամերին ՏՀՏ-ների կիրառումը ներկայումս դարձել է անհրաժեշտություն: Տեխնոլոգիաները ուսուցման գործընթացում հանդես են գալիս նաև որպես դասի կազմակերպման, կառուցման գործիք՝ որակապես փոխելով և ուսուցչի դերը և դասի արդյունավետությունը: Դրանք օգնում են նյութի նկատմամբ հետաքրքրություն զարգացնել, միավորել զգայական պատկերները, միջառարկայական գուգահեռները, կյանքի հետ կապը, ուսուցումը հարմարեցնել սովորողների ուսումնառության անհատական ոճերին, օգնում են սովորողին սովորելու ընթացքում օգտվել հնարավորինս շատ զգայարաններից: Օտար լեզուների, մասնավորապես անգլերենի, իմացությունը հնարավորություն է տալիս սովորողին ծանոթանալ համաշխարհային գիտական, հասարակական, տնտեսական, մշակութային տեղեկատվությանը, ընձեռում է տեղեկատվության գոյություն ունեցող անսպառ աղբյուրներից օգտվելու լայն հնարավորություններ, նպաստում է նրանց գիտելիքների և մտահորիզոնի ընդլայնմանը, իսկ տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները ապահովում են նյութի որոնումը հավաքումը, ուսումնասիրումը, հետևաբար օտար լեզվի դասաժամերին ՏՀՏ-ների կիրառումը ներկայումս դարձել է անհրաժեշտություն: Տեխնոլոգիաները ուսուցման գործընթացում հանդես են գալիս նաև որպես դասի կազմակերպման, կառուցման գործիք՝ որակապես փոխելով և ուսուցչի դերը և դասի արդյունավետությունը: ՏՀՏ-ների և ինտերնետի կիրառումը անգլերենի դասաժամին կարող է նպաստել ոչ միայն խոսքային չորս կարողությունների զարգացմանը, այլ նաև նպաստում է շատ հաճախ աշխատանքային ոլորտում անհրաժեշտ հմտությունների ձևավորմանը: Օրինակ, երբ ուսուցչի գլխավոր նպատակներից է

ամրապնդել տառաճանաչությունը, ուղղագրական տարրական կանոնները, տառ-հնչյուն համակցությունը, կարելի է սովորողներին Touch Typing ծրագրի խաղերի օգնությամբ ծանոթացնել ստեղնաշարի դասավորությանը և խրախուսել Word ծրագրում տեքստերի հավաքմանը: Կարելի է կազմակերպել բառ-թելադրություններ, որի ընթացքում սովորողներից մեկն ընթերցում է բառերը, մյուսները աշխատում են համակարգիչներով հավաքել ընթերցվող բառերը որքան հնարավոր է արագ և առանց ստեղնաշարին նայելու: Սա մեծ հետաքրքրություն է առաջացնում հատկապես տարրական դասարանների սովորողների մոտ և կարելի է կիրառել նաև որպես խրախուսում:

XXI դարը տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջան է, իսկ անգլերենն ակնհայտորեն և մեծ արագությամբ զբաղեցնում է հաղորդակցական տեխնոլոգիաների լեզվի դերը: Սա է պատճառը, որ և սովորողը և սովորեցնողը պետք է կարևորեն նաև լեզվի ինքնուսուցումը, իսկ ինքնուսուցմանը կարելի է նպաստել, եթե «սովորել սովորելը» դառնում է ուսումնառության անքակտելի մասը, երբ սովորողներն ավելի ու ավելի շատ են գիտակցում ուսումնառության մեջ կիրառվող հնարքները և իրենց համար առավել համապատասխան ձևն ընտրելու հնարավորությունը:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Байкова Л.А., Гребенкина Л.К. Педагогическое мастерство и педагогические технологии. -М., 2011.
2. Балаев А.А. Активные методы обучения. –М., 2016.
3. Бершадский М.Е., Гузеев В.В. Дидактические и психологические основания образовательной технологии. -М.: Центр “Педагогический поиск”, 2013.
4. Колеченко А.К. Энциклопедия педагогических технологий.-СПб, 2011.
5. Максимовская М. А. Информационное управление школой // Информатика и образования — 2003. № 11.
6. Машбис Е. И. Психолого–педагогические проблемы компьютеризации обучения. -М., Просвещение, 2006.
7. Педагогика. Большая современная энциклопедия. Состав. Рапацевич Е. С. -Мн., 2005.
8. Полат Е. С., Бухаркина М. Ю., Моисеева М. В., Петров А. Е. Новые педагогические и информационные технологии в системе образования: Учеб. пособие. -М., Академия, 2000.
9. Селевко Г.К. Современные образовательные технологии.-М., 2008.